

ՈՒՇԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԹԱՂՄԱՆ ԾԻՍԱԿԱՐԳԵՐԻ
ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՀՎԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐՈՎ

ԳԱՐԵԳԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Թաղման ծիսակարգը համանուն ծեսի հիմնարար բաղադրիչներից է, որի միջոցով արտահայտվում է հուղարկավորողների վերաբերմունքը հանգուցյալի դիակի նկատմամբ: Յուրաքանչյուր ծիսակարգ, իր հերթին, կարելի է տարանջատել հիմնական բաղկացուցիչների՝ թաղման եղանակ, հուղարկավորության տեսակ, աճյունի տեղադրություն, կմախքի դիրք և այլն¹: Հարկ է հիշել, որ «այնկողմնային աշխարհի» մասին մարդիկ, հավանաբար, որոշակի պատկերացումներ ունեին արդեն միջին պալեոլիթում, մոտավորապես 90–70 հազար տարի առաջ: Մուսոյերյան դամբարաններում, սովորաբար, ննջեցյալներն ամփոփվել են դիաթաղման կամ դիամասնատման եղանակներով²:

Ուշբրոնզեդարյան Հայաստանում դիաթաղման կամ դիադրման եղանակը կարող էր կապված լինել Արա աստվածության մասին եղած պատկերացումների հետ: Արայի կերպարը, որը բազմաթիվ զծերով առնչվում էր հինարևելյան մեռնող-հառնող այլ աստվածություններին, ինչպես կարծում են, արտահայտում էր բնության զարթոնքը, ծլարձակող բուսականությունը, բերրիությունը, կյանքի վերածնունդը³: Արայի բնույթը՝ որպես անդրաշխարհի աստվածություն⁴, պայմանավորված է նրա բուսական հնագույն բովանդակությամբ⁵: Դամբարանում հանգչող ննջեցյալը դիտվել է որպես հարություն առնող և ծլարձակող հատիկ⁶: Ժողովրդական պատկերացումներում Արայի մահը և հարություն-

¹ Հուղարկավորման ծիսակարգերի վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Գ. Թ ու մ ա ն յ ա ն. Թաղման ծիսակարգերը ուշբրոնզեդարյան Հայաստանում. – ՊԲՀ, 2007, № 1, էջ 138–152:

² С. Н. З а м я т н и н. Очерки по палеолиту. М.–Л., 1961, с. 29–42; Г. П. Г р и г о р ь е в. Начало верхнего палеолита и происхождение Homo sapiens. Л., 1968, с. 147; Ю. А. С м и р н о в. Морфология погребения (опыт создания базовой модели). – В кн: Исследования в области балто-славянской духовной культуры: Погребальный обряд. М., 1990, с. 216. Դիաթաղման եղանակով ամփոփված ննջեցյալները, մեծ մասամբ, տեղադրված են քնած մարդու դիրքով:

³ Ն. Ա դ ո ն ց. Մի հին պաշտամունքի հետքերը Հայաստանում. – Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 370–382; Ա. Մ ա տ ի կ յ ա ն. Արա Գեղեցիկ. համեմատական-քննական ուսումնասիրություն. Վիեննա, 1930, էջ 217, Գ թ. Ղ ա փ ա ն յ ա ն. Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1944, էջ 90–93:

⁴ Г. К а п а н ц я н. Историко-лингвистические работы. Ереван, 1956, с. 306.

⁵ Գ. Տ ի ր ա յ ա ն. Հայկական մշակույթը VI–IV դարերում. – Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ), հ. I. Երևան, 1971, էջ 484:

⁶ Ա. Մ ն ա զ ա կ ա ն յ ա ն. Վերստին Մուսասիրի տաճարի ճակտոնի խորհրդանշանի մասին. – ՊԲՀ, 1977, № 4, էջ 208:

նր նմանապես համադրվում էր հաստիկը հողի մեջ դնելու և ծլարձակելու հետ⁷: Կարելի է ենթադրել, որ մեռյալի մարմինը հողին պահ տալով՝ հուղարկավորողներն իրենց երևակայության մեջ նրան նմանեցնում-նույնացնում էին «այն-կողմնային աշխարհի» աստվածություններից մեկին՝ Արային՝ ակնկալելով ննջեցյալի վերածնունդը:

Նախկինում մանրամասն անդրադարձել ենք հանգուցյալի ստորին ծնոտը գանգից անջատելու արարողության հիմքում ընկած պատկերացումներին⁸, ուստի հիշյալ խնդիրը կշռափենք հպանցիկ: Այստեղ կրկնենք միայն, որ հիշյալ արարողությունը պայմանավորված է մահացածին չար ոգիների վնասաբեր ազդեցությունից զերծ պահելու և նրա վերածննդին նպաստելու ձգտումով: Ըստ երևույթին, հատկապես կարևոր էր մահացածի հանդեպ վեղայական Պուշան աստծո բարեհաճությունը, ով տնօրինում էր ճանապարհները, ուղեկցում մահացածներին⁹ և ում ստորին ծնոտը պոկվել էր աստվածների ընդհարման ժամանակ: Հնարավոր է, որ հովանավոր աստվածությանը նմանեցնելու միտումով զոհաբերելին հանգուցյալի ստորին ծնոտը, քանի որ հին մարդու մտածողությամբ որևէ էակի բարեհաճությունը նվաճելու լավագույն միջոցը նրան նմանվելն էր¹⁰: Հայտնի է նաև, որ մի շարք բնորոշ գծերով Պուշանի կերպարը համադրելի է հայկական դիցաբանության Արային:

Թաղման դիամասնատման եղանակի հիմքում կարող են ընկած լինել հնում տարածված այն պատկերացումները, որ տիեզերքն առաջացել է դիամասնատմամբ զոհաբերված մարդու մարմնի մասերից: Այդ մասին է պատմվում առասպելական մարդուն՝ Պուրուշային, ձոնված վեղայական հիմնում¹¹, հին իսլանդական ավանդության առասպելական մարդուն՝ Իմիրին, նվիրված երգում¹² և այլ ավանդություններում: Ուստի, մասերի բաժանելով դիակը, հավանաբար, հին մարդիկ ննջեցյալին իբրև թե հաղորդակից էին դարձնում «աշխարհի արարչագործությանը», որը կատարվում էր նրա վերածնունդն ապահովելու նպատակով: Տարբեր ժողովուրդների բանահյուսության մեջ քիչ չեն առասպելները մասնատված դիակների վերակենդանացման վերաբերյալ: Օրինակ՝ Տանտալոսի և նրա որդի Պելոպսի մասին հին հունական ավանդագրությունը աստվածները տղայի մասնատված մարմնի մասերը դնում են կաթսայի մեջ, այն տեղադրում են կրակի վրա, ապա Հերմեսն իր հմայումներով վերակենդանացնում է Պելոպսին¹³: Հին եգիպտական դիցաբանությունում Օսիրիսի որդի Խորը, ազգականների հետ միասին, վերամիացնում է Օսիրիսի մասնատված մարմնի անդամները և հմայական ծիսակատարությամբ վերակենդանացնում

⁷ Մ. Երեմյան. Երկրագործությունը հին Հայաստանում. – ՀԺՊ, էջ 805-806:

⁸ Գ. Թումանյան. Արուճի դամբարանադաշտի ուշբրոնզեդարյան №5 դամբարանը (թաղման ձեռք մեկնարանելու փորձ). – ՊԲՀ, 2005, №3, էջ 167-168:

⁹ Ригведа. Мандалы I–IV. М., 1989, I, 42.

¹⁰ М. Элиаде. Космос и история. М., 1987, с. 55.

¹¹ Ригведа. Избранные гимны. М., 1972, X, 90, 13–14; Мифы народов мира. Энциклопедия, т. 2. М., 1982, с. 351.

¹² Старшая Эдда. Древнеисландские песни о богах и героях. М.–Л., 1963, с. 32, 39.

¹³ Мифы народов мира т. 2, с. 298.

հոր դիակը¹⁴: Ավելորդ չէ նշել, որ դիամասնատման եղանակով կատարված որոշ թաղումների ուղեկցող գույքը դամբարան է դրվել նախապես կոտրված վիճակում¹⁵: Այս սովորությունը, մասնավորապես, կապակցվում է հարություն առնելու հավատալիքներին: Երևի պատահական չէ, որ եգիպտացիները Օսիրիսի հարությանը նպաստելու համար նրա գերեզմանին խեցանոթների բեկորներ էին շարում¹⁶: Հիշենք նաև, որ որոշ հետազոտողների կարծիքով հին քարեդարում թաղման դիամասնատման եղանակի (ավելի ճշգրիտ՝ դրա զանգանջատման տարբերակի) հիմքում կարող էր ընկած լինել երկյուղը հանգուցյալի հանդեպ¹⁷: Կարծիք է հայտնվել, որ միայն մահացածի գլուխը թաղելու սովորությունը պայմանավորված է նրա վերածննդին աջակցելու ձգտումով: Գլուխը մարմնից անջատելով՝ դիակին տրվում էր «լուսնային կերպարանք»: Քանի որ լուսինը, ըստ հին պատկերացումների, մեռնելու և վերածնվելու հասկություն ունի, ապա նույնը վերագրվում էր «լուսնային դեմք» ունեցող հանգուցյալին¹⁸: Հնարավոր է համարվում առանձին զանգերի թաղումների առկայությունը մուսոյերյան դարաշրջանում¹⁹: Եվրոպական որոշ հնավայրերի օրինակյան, մադլենյան և ազիլյան շերտերում հայտնաբերվել են գլուխների խմբային կամ առանձին թաղումներ²⁰: Երիքովի մ.թ.ա. VII հազարամյակի կացարանների հատակի տակ գտնվել են մարդկանց որոշակի կարգով թաղված զանգեր, որոնցից մի քանիսին հազցված են եղել դեմքի փափուկ հյուսվածքները վերատադրող կավե դիմակներ, իսկ ակնախոռոչներում տեղադրված են եղել խեցիներ: Երբեմն ներկով պատկերված է գլխի և դեմքի մագաձածկույթը: Որոշ հետազոտողներ նման եղանակով թաղումը համարում են նախնիների պաշտամունքի արտահայտություն²¹: Հիշյալ ժամանակաշրջանին պատկանող զանգե-

¹⁴ Նույն տեղում, էջ 267, История древнего Востока, ч. II. М., 1988, с. 381.

¹⁵ Օ. Իսնկիյանն. Դամբարանադաշտեր Միսիանի շրջանում. – ՀՀ ԳԱԱ «Լրագրեր Հասարակական գիտությունների» (այսուհետև՝ ԼՀԳ), 1984, №9, էջ 59, Ю. А. Смирнов. Лабиринт: Морфология преднамеренного погребения. М., 1997, с. 132, 144, 163.

¹⁶ Յ. Շեբեն. Библиейские холмы. М., 1966, с. 364, 385.

¹⁷ С. Н. Замятин. Նշվ. աշխ., էջ 42, Ю. А. Смирнов. Морфология погребения, с. 220. Ննջեցյալի հանդեպ մերձավորների վերաբերմունքի երկճուղավորումը բնորոշ է բոլոր ժամանակներին: Այդ երկարժեքությունն արտահայտվում է մահացածի նկատմամբ միաժամանակ վախի բացակայությամբ ու երկյուղով, զուգապես մեռյալի հարությանը նպաստելու և նրա վերադարձն արգելելու մտահոգությամբ ու այլ երկակի հակադրություններով: Մակայն այս երկակի հակադրությունների համակարգում, այնուամենայնիվ, գերակշռող է հանգուցյալի հանդեպ դրական վերաբերմունքը, նրա վերածննդին նպաստելու ձգտումը:

¹⁸ Յ. Շեբեն. Лунный бог. М., 1976, с. 206–207.

¹⁹ Ю. А. Смирнов. Лабиринт..., с. 176.

²⁰ С. Н. Замятин. Նշվ. աշխ., էջ 33, А. Л. Монгайт. Археология Западной Европы. Каменный век. М., 1973, с. 177.

²¹ В. М. Массон. Первые цивилизации. Л., 1989, с. 35; Լ. Ե. Իսախանյան. Միջին բրոնզեդարյան դամբարաններ Հառիճից. – Հայկական ՄՄՀ-ում 1985–1986 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Երևան, 1987, էջ 11:

րի թաղումներ են հայտնաբերվել Չաթալ Հյույուքում²²: Ննջեցյալի միայն գլուխը թաղելու սովորությունը կիրառվել է նաև հալաֆյան մշակույթի դամբարաններում (Յարհմթեփե II, Թել Արփաչիյա): Թել Արփաչիյայի թաղումներում գանգերը դրված են խեցանոթների մեջ²³: Երբեմն ընդգծվում է նաև, որ հնում մարմնից անջատված գլխին վերածնվելու հատկություն են վերագրել: Մեր հայեցակետով ևս, սխալ չի լինի ենթադրել, որ միայն գլուխը թաղելու սովորությունը պայմանավորված է մեռյալի վերածնունդն ապահովելու ցանկությամբ: Դրա կողմնակի վկայությունն է նաև այն հանգամանքը, որ որոշ դամբարաններում (Գառնի, Արթիկ, Մինգեչաուր) ննջեցյալի մարմնից անջատված գլուխը դրված է քերեղանի մեջ²⁴, որը խորհրդանշանների միջավայրում կապված է լուսնի հետ: Հիշենք, որ դեռևս վերին պալեոլիթում մարդկանց գանգերից թասեր էին պատրաստում²⁵: Գլուխը թաղելու սովորույթի մասին հիշողության արձագանքը կարող են լինել «Գլուխդ գլխափոսերը մննի»²⁶, «Յխեմ գլուխդ» կամ «Գլուխդ թաղեմ» անեծքները:

Ուսումնասիրողները համարում են, որ երկրորդվող դիաթաղման կամ վերահուղարկավորման եղանակն առաջացել է այն պատկերացումների համաձայն, ըստ որի հոգին և մարմինը գտնվում են անխզելի կապի մեջ և հոգին կարող է անջատվել մարմնից միայն դրա քայքայումից հետո: Այսինքն՝ այն կիրառվել է «պիղծ մարմնի շուտափույթ ոչնչացման և հոգու ազատագրման» նպատակով²⁷: Թաղման հիշյալ եղանակի առաջացումը բացատրվում է նաև նրանով, որ գոյություն ուներ կրակի, ջրի և մայր հողի պաշտամունք: Թվարկված տարրերը սրբազան էին համարվում և անթույլատրելի էր դիակի անմաքրությամբ դրանց ապականելը²⁸: Ամայի վայրում թողնված դիակը հոշոտում էին գազանները կամ այն փտում էր արևի տակ, ըստ որում արեգակի ճառագայթները «դառնում էին ուղի, որով հոգին բարձրանում էր երկինք»²⁹: Թաղման այս եղանակն էր նախանշված «Կրտսեր Ավեստայում», որին և հետևում էին «Ավեստայի» ստրավանները և պարսից մոզերը³⁰: Հավանաբար, թաղման վերահուղարկավորման եղանակի առաջին փուլին է վերաբերում Վենդիդատի հետևյալ հատվածը (XX, 64-66).

²² J. M e l l a r t. Catal Hüyük: A Neolithic Town in Anatolia. New York, 1967, pp. 65, 108, 204.

²³ Н. Я. М е р п е р т, Р. М. М у н ч а е в. Погребальный обряд племен халавской культуры. – В кн.: Археология Старого и Нового Света. М., 1982, с. 40–42.

²⁴ Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն. Գառնի, IV, Երևան, 1969, էջ 130 (մ. թ. ա. II հազ. վերջ–I հազ. սկիզբ), Թ. Ս. Խ ա չ ա տ ռ յ ա ն. Древняя культура Ширака. Ереван, 1975, с. 146; Գ. Մ. Ա ս լ ա ն ո վ, Բ. Մ. Վ ա ի մ ո վ, Գ. Ի. Ի ո ն ե. Древний Мингечаур. Баку, 1959, с. 50.

²⁵ Ս. Ն. Յ ա մ յ ա տ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 33:

²⁶ Մ. Հ ա թ ո լ թ յ ո լ յ ա ն. Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Երևան, 1975, էջ 200:

²⁷ Մ. Բ ո յ ս. Зороастрийцы. Верования и обычаи. М., 1987, с. 57; В. Ի. Մ ա Ր կ ո վ ի ն. Дольмены Западного Кавказа. М., 1978, с. 228.

²⁸ История древнего мира, кн. I. М., 1989, с. 395; Մ. Բ ո յ ս. Նշվ. աշխ., էջ 57:

²⁹ Մ. Բ ո յ ս. Նշվ. աշխ., էջ 23:

³⁰ Մ. Ա. Դ ա ն ճ ա մ ա ե վ, Վ. Գ. Լ ո կ ո ն ի ն. Культура и экономика древнего Ирана. М., 1980, с. 321; А. О. М а к о в е л ь с к и й. Авеста. Баку, 1960, с. 114.

*Երբ որ նա դառնա ծեր, տկարամիտ կամ անկարող.
Այնժամ ուժով և կրքով և ըստ օրենքի՝ մազդեզացիները
թո՛ղ նրան
տեղափոխեն լեռների կատարների վրա:
Թո՛ղ նրանք՝ նրա գլուխը կտրեն, թո՛ղ հանձնեն նրա մարմինը
Սպենտա-Մենյուսի ամենակալ արարածներին, մսակեր թռչուններին,
անզդերին³¹:*

Պարսիկների մոտ տարածում գտած երկրորդվող թաղման եղանակի մասին է պատմում Հերոդոտոսը³², իսկ Ստրաբոնը գրում է կասպիական ցեղերի նմանօրինակ սովորության մասին: Ըստ Ստրաբոնի, եթե դին ճանկում էին գիշակեր թռչունները, ապա հանգուցյալը երանելի էր համարվում, եթե պատառոտում էին զագանները, ապա՝ նվազ պատվելի, դին անեղծ թողնվելու դեպքում ննջեցյալը դժբախտ էր համարվում³³: Մովսես Խորենացին հաղորդում է, որ Շամիրամը հրամայում է Արայի դին դնել «ի վերնատան ապարանիցն»³⁴: Ենթադրությունը, որ հին հայկական ավանդազրույցից հայտնի այս վարվելակերպը կարող է կապակցվել հույն պատմիչների նկարագրած թաղման հիշյալ սովորությունների հետ³⁵, ճշգրտման կարիք ունի, քանի որ հին Հայաստանում նմանօրինակ գրույցները մեկնաբանվում էին հայրենիքի համար գոհված հերոսների վերակենդանանալու պատկերացումներով³⁶: Այսօր էլ մեր շատ գերեզմանոցների մոտակայքում կան հատուկ կառուցված պատվանդաններ, որոնց վրա դազաղը ցած դնելու արարողությունը կարող է թաղման վերահուղարկավորման եղանակի հեռավոր արձագանքը լինել:

Հոգու մասին հին հավատալիքների արտահայտություններից է ննջեցյալներին դիակիզման եղանակով թաղելը³⁷: Այս եղանակը նս, ինչպես վերահուղարկավորումը, հավանաբար, առաջացել է մարմնի և հոգու փոխկապակցվածության միևնույն պատկերացումների հիման վրա: Սակայն թաղման այս երկու եղանակների մեջ էական տարբերություն կա: Դիակիզման եղանակում կիրառ-

³¹ Ա. Գ. Դ ո լ լ ի ս ա ն յ ա ն. Երկու ուշագրավ հատված «Ավեստայից».- ԼՀԳ, 1991, № 1, էջ 156:

³² Հ ե ռ ո ղ ո ս ու. Պատմություն ինը գրքից (այսուհետև՝ Հերոդոտոս), թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986, I, 140:

³³ С т р а б о н. География. В 17 книгах. М., 1964, XI, 11, 8.

³⁴ Մովսիսի Խորենացու Պատմութիւն հայոց, աշխատութեամբ Մ. Արեղեան եւ Ս. Հարությունեան, Տիֆլիս, 1913, I, ԺԵ:

³⁵ Հ. Ա. Մ ա թ ի ը ո յ ա ն, Ռ. Մ. Թ ո ը ո յ ա ն. Արգիշթիլիսիլիի սարկոֆագր.- ՊԲՀ, 1986, № 3, էջ 226-227:

³⁶ Մուշեղ Մամիկոնյանի դին դրել էին մի աշտարակի տանիքին, որովհետև հարազատները հավատում էին, որ առեզները կիջնեն ու կկենդանացնեն քաջին (Փառստոսի Բուզանդացու Պատմութիւն հայոց ի չորս դպրութիւնս, Վենետիկ, 1832, V, ԼԶ):

³⁷ Г. Ф. Н и к и т и н а. Погребальный обряд культур полей погребений Средней Европы в I тысячелетии. до н. э.-первой половине I тысяч. н. э.- В кн.: Погребальный обряд племен Северной и Средней Европы в I тысячелетии до н. э.-I тысячелетии н. э. М., 1974, с. 59.

վում էր կրակը, որն անկասկած ուներ խորհրդանշական իմաստ: Հին պատկերացումներով, կրակն իր մեջ վերածնող էություն էր ամփոփում³⁸: Այն ոչ միայն արագացնում էր «մարմնական կապանքներից» հոգու ազատագրումը, այլև մաքրագործում էր մարդուն³⁹: Դրանով իսկ, հավանաբար, կրակը կոչված էր ապահովելու մարդու վերածնունդը կամ նրա մուտքը «դրախտ»⁴⁰: Հավանորեն նույն մտածելակերպից էլնելով էլ գոհաբերությունները ևս դրվում էին դիակիզման խարույկի վրա⁴¹: Թաղման ծիսակարգում դիակիզման կիրառումը թաղման ձեսի մաքրագործման ծիսակատարության համակարգում կրակի դերի աստիճանական ուժեղացման տրամաբանական ամփոփումն էր:

Դիակիզման եղանակը կիրառվում էր աքայան Հունաստանում: Հին հույները համոզված էին, որ մինչև մեռյալի մարմինը կրակին չհանձնվեր, նրա հոգին չէր կարող հանգստանալ: Ըստ հուներոսյան պոեմների՝ դիակիզումից առաջ հանգուցյալի մարմինը լվանում էին, օծում անուշահոտ յուղերով, տեղադրում դիամահձի վրա և ծածկում թանկարժեք ծածկոցով: Խարույկը վառելուց առաջ դիակը պատում էին մեղրով և ճարպով, տեղադրում խարույկի կենտրոնում, իսկ գոհաբերությունները՝ դրանից որոշակի հեռավորության վրա, խարույկի եզրերին: Հին հույները կարծում էին, որ դիակիզված ննջեցյալը կարող է «օգտվել» միայն այրված իրերից: Դիակիզումից հետո կրակը վերջնականապես հանգստում էին սև գինով, հավաքում մահացածի ոսկորները, պատում յուղով, սքողում նուրբ գործվածքով և դնում ոսկե սափորի մեջ: Կատարվում էր հոգեհացի արարողություն և մարգախաղեր էին անցկացվում⁴²:

Վեղայական թաղման հիմներում ևս նկարագրվում է դիակիզման եղանակը: Հին հնդկների պատկերացումներով դիակիզման խարույկի տեղը չար ոգիների բնակության վայրերից էր համարվում: Այդ տարածքի մաքրագործման նպատակով աղոթքներ էին արտասանվում: Որպեսզի կրակը «չայրեր» հանգուցյալին, նրա մարմնի մասերի վրա դրվում էին սևաթույր այծի կամ կովի մարմնի համապատասխան մասերը՝ սահմանված հաջորդականությամբ. «Քո բաժինն այժն է: Ջերմությամբ մոխրացրու նրան», «Ազնիից ծածկվիր կովի անդամներով, ինչպես գրահով»: Կրակի լեզվակները մահացած մարդուն պիտի փոխադրեին «հայրերի» մոտ: Նրա մարմնի յուրաքանչյուր անդամը պիտի միաձուլվեր որոշակի տարերքի. աչքը՝ արևին, հոգին՝ քամուն, ոսկորները՝ բույսերին: Իսկ ինքն ամբողջությամբ միախառնվելու էր երկնքին, երկրին և

³⁸ Л. И. А к и м о в а. Об отношении геометрического стиля к обряду кремации.– В кн.: Исследования в области балто-славянской духовной культуры..., с. 231.

³⁹ Т. В. Г а м к р е л и д з е, В я ч. В с. И в а н о в. Индоевропейский язык и индоевропейцы. Т. 2. Тбилиси, 1984, с. 831.

⁴⁰ В. Я. П е т р у х и н. Погребения знати эпохи викингов (по данным археологии и литературных памятников).– Скандинавский сборник, XXI. Таллин, 1976, с. 155. Հիշենք, որ ժամանակաշրջանի պատկերացումներում մահը և վերածնունդը փոխկապակցված էին:

⁴¹ Հ ո ս և թ ո ս. Բլիական (այսուհետև՝ Բլիական), Երևան, 1955, VI, XXIII, ն ու յ ի ՝ Ողիսական (այսուհետև՝ Ողիսական), Երևան, 1988, XI, XII:

⁴² Բլիական, VII, XVIII, XXIII, XXIV, Ողիսական, XI, XXIV, Հերոդոտոս, V, 92:

ջրին⁴³: Պարզ է, որ նշված վերափոխումներով ննջեցյալն առնչվում էր «տիեզերքի արարչագործությանը», այսինքն՝ ենթադրվում էր նրա վերածնունդը: Դիակիզման խարույկին, մեռյալի գլխավերևում, տեղադրվում էր նաև յուղով լի անոթ՝ նախանշված որպես խմիչք աստվածների համար: Որպես թաղման խարույկի հակակշիռ և քավություն՝ վառվում էր երկրորդ մի խարույկ, որի վրա գոհաբերություններ էին արվում աստվածներին: Դիակիզումից հետո կատարվում էր «trikadruka» արարողությունը՝ 3 օրվա ընթացքում սոմայի հեղուկներ էին արվում: Ընդունված էր այնքան ջուր լցնել դիակիզման խարույկի վրա, որ նրա տեղում ճահիճ առաջանար, աճեին ջրային բույսեր և գորտեր բնակվեին⁴⁴:

Բողազքոյից գտնված մի շարք սալիկներ հատվածներ են պարունակում արքայի կամ թագուհու թաղման նկարագրությամբ: Խեթական արքայական թաղման ծեսը տևում էր 14 օր: «Աստված դարձած» ննջեցյալին դիասայլով տանում էին դիակիզման վայրը, որտեղ վառվում էր «հավերժական կրակը»: Հանգուցյալի «պատկերի» առջև, որը ևս կառքով բերվում էր դիակիզման վայրը, 12 օր անընդմեջ կատարվում էին գոհաբերությունների տարբեր արարողություններ: Դիակիզման հաջորդ օրվա արշալույսին կանայք գալիս էին կրակի մոտ, այն հանգնում 10-ական անոթ գինով, զարեջրով և էլի ինչ-որ ծիսական խմիչքով, հավաքում ննջեցյալի ոսկորները, դրանք իջեցնում գտված յուղով լի արծաթե սափորի մեջ, այնուհետև փաթաթում վուշե գործվածքով և գեղեցիկ հագուստով ու տեղադրում աթոռին: Կատարելով թաղման հացկերույթի, հմայությունների և գոհաբերությունների մի շարք արարողություններ, հանգուցյալի ոսկորները տեղափոխում էին «քարե տուն»: Աճյունը տեղադրում են այնտեղ հարդարված դիամահձին, որի առջև դնում էին գտված յուղով լի անոթ և ճրագ: Այնուհետև գոհաբերություններ էին արվում մահացածի հոգուն, կարևորագույն աստվածներին և հոգեհաց էր տրվում: Հետագայում նորրնձա «աստծուն» մատուցվում էին նույն մեծարանքները, ինչ-որ պետական պանթեոնի մյուս աստվածություններին⁴⁵: Օ. Գեռնիի կարծիքով խեթական հասարակությունում թաղման դիակիզման եղանակը սոցիալական շերտավորման հայտանիշ չէր: Իսլանդա-սկանդինավյան ժողովրդական վեպում ևս խոսվում է թաղման դիակիզման եղանակի մասին. «Օրը գովիր երեկոյան, կանանց՝ խարույկի վրա»: Միգուրդի և Բրյունհիլդի մասին երգերում, ինչպես հոմերոսյան պոեմներում, նկարագրվում են խարույկի վրա այրվող գոհաբերությունները: Միգուրդի դիակիզման խարույկը զարդարվել է շքեղ գորգերով ու վահաններով, Բրյունհիլդի դին այրվել է մեկ այլ խարույկում: Հելգիի գոհվելու և երկինք գնալու մասին երգում ասվում է, թե «հնում հավատում էին, որ մարդիկ նորից են ծնվում»⁴⁶: Ազգագրական տվյալներով՝ որոշ ցեղերի մոտ «հոգու ճակատագիրը կախում ունի հանգուցյալի սոցիալական դիրքից»: Կանանց և երեխաների դիակներն այ-

⁴³ Ригведа. Избранные гимны, X, 16, 3–7.

⁴⁴ Նույն տեղում, X, 16, 8, էջ 356-357:

⁴⁵ Օ. Ր. Գեռնի. Хетты. М., 1987, с. 146–150; Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов. Եզվ. աշխ., էջ 826-827; История древнего Востока, ч. II, с. 156.

⁴⁶ Старшая Эдда, с. 22, 93.

րել, նշանակում է նրանց դատապարտել վերջնական մահվան՝ առանց վերածնվելու հնարավորության: Իսկ ռազմիկների և առաջնորդների հոգիները դիակիզման խարույկի բոցերով տեղափոխվում են երկինք, այնտեղ հավերժական կյանքով ապրելու համար⁴⁷: Հայ ազգագրության մեջ պահպանվել են տեղեկություններ դիակիզման եղանակի ուշ արձագանքների վերաբերյալ: Անցած դարասկզբին խոյեցիները թաղումից անմիջապես հետո գերեզմանաթմբի վրա ցախ էին դարսում և վառում, իսկ Գանձակի Բանանց գյուղում նույնն անում էին երեկոյան⁴⁸: Որոշ վայրերում թաղման հաջորդ օրվա առավոտյան՝ այգը կատարելիս, մահացածի հարազատները (հիմնականում կանայք) գնում էին գերեզմանոց, որտեղ կանանցից մեկը ջուր էր լցնում շիրիմի⁴⁹: Բացառված չէ, որ այս սովորությունը դիակիզման հաջորդ օրվա համապատասխան արարողության արձագանքը լինի:

Հակիրճ անդրադառնանք նաև հուշադամբանային թաղումների աշխարհայացքային կողմին: Հուշադամբանները յուրատեսակ զոհարաններ են⁵⁰, որոնք կառուցվել են թաղման ծեսի պահանջներից ելնելով և միևնույն նպատակով, ինչ որ մյուս դամբարանները: Այնտեղ տեղադրվել են հանգուցյալի տոնական հանդերձանքը, անձնական իրերը և նախատեսված զոհաբերությունները: Ննջեցյալի աճյունի բացակայությունը, ինչ խոսք, չէր խանգարում թաղման ծեսով սահմանված մյուս արարողությունները կատարելուն: Ընդհակառակը, աճյունի բացը, հավանաբար, պարտադրում էր լրացուցիչ կամ ընդունվածից ուրոշ չափով տարբերվող արարողություններ, հատկապես, հիշատակի ծիսակատարության համակարգում: Հուշադամբանների թաղման սրահներին կից կառուցվում էին զոհարաններ, որոնց քարերին երբեմն խորհրդանշական տեսարաններ էին պատկերվում, դամբանասրահներում տեղադրվում էին ոչ մեծ հուշակոթողներ, զոհաբերված կենդանիների կմախքները, հաճախ՝ գլխատված վիճակում, զետեղվում էին թաղման սրահի կենտրոնում, ասես փոխարինելով մահացածին: Հուշադամբանային թաղման ժամանակ, առանց այն էլ պայմանական և խորհրդավոր ծեսում, թվում է, առավել շատ են խորհրդանշանները: Կենտաֆների համար սահմանված կանոնակարգից յուրաքանչյուր շեղում, որը պայմանավորված չէր աշխարհայացքային փոփոխություններով, կարող էր խանգարել ծիսական նպատակաուղղվածությանը, սովյալ դեպքում՝ մեռյալի վերածննդին, նրան դատապարտելով ոչնչացման, «հավերժական մահվան»: Մեր կարծիքով՝ այս տեսանկյունից պիտի փնտրել հուշադամբանների կառուցման և «կահավորման» բացատրությունը:

Թաղման տեսակները ևս, ամենայն հավանականությամբ, որոշակի կախվածության մեջ են մահվան պատկերացումներից: Վերջինները, իրենց հերթին,

⁴⁷ В. Я. П р о п. Исторические корни волшебной сказки. Л., 1986, с. 101.

⁴⁸ Ե. Լ ա լ ա յ ա ն. Հուղարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում. «Տեղեկագիր» ՀՄԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի, 1928, № 3, էջ 95:

⁴⁹ Յ. Յ ա ռ ա տ յ ա ն. Культурные мотивы семейных обычаев и обрядов у армян. – В кн.: Армянская этнография и фольклор. Вып. 17. Ереван, 1989, с. 36.

⁵⁰ Թ. Ս. Խ ա չ ա տ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 144:

ինչ-որ ձևով կապված են սոցիալական գործոնների հետ: Օրինակ՝ ուշ բրոնզի դարաշրջանում միայնակ թաղումների գերակշռությունը կարող է բացատրվել հասարակության ուժեղ շերտավորումով, նրանում յուրաքանչյուր անհատի դերի խիստ մեծացումով (առաջնորդ, քուրմ, ռազմիկ և այլն): Երկրի վրա արարքների համար «այնկողմնային աշխարհում» յուրաքանչյուր անհատի պատասխանատվության, մեղավոր մարմնի մաքրագործման և հոգու ազատագրման, ինչպես նաև ննջեցյալների վերածննդի գաղափարները կարող էին հիմք հանդիսանալ միայնակ թաղումների համար:

Դժվար է պարզել, թե հնագիտական պեղումներով հայտնաբերված գույգ թաղումներից որոնք են տարածամանակյա և որոնք են միաժամանակ կատարվել: Բոլոր դեպքերում, համատեղ թաղման հիմքում, հավանաբար, ընկած է այն հին պատկերացումը, որ կինն ամուսնու հետ մեկ միասնական ամբողջություն է կազմում, մեկ մարմին⁵¹, ուստի «անդրաշխարհում» ևս նա պիտի անբաժան լինի ամուսնուց: Նման մտածողությունը տրամաբանական հետևանքն էր ընտանիքում հայրիշխանության հաստատման, իսկ հասարակության մեջ՝ տղամարդու դերի անհամեմատ մեծացման: Կամավոր դիակիզման խարույկ բարձրացած և ննջեցյալ ամուսնու հետ «համատեղ մահվան» ծիսակատարությունն իրականացրած կինը հռչակվում էր «բարեպաշտ»: Որոշ փաստեր կողմնակիորեն վկայում են, որ որպես «բարեպաշտ», մահն ընդունած այրին համեմատվում էր մարտադաշտում զոհված հերոսի հետ⁵², ուստի, ամենայն հավանականությամբ, կարող էր վերածննդի հույս ունենալ:

Խմբային թաղման տեսակը, անշուշտ, նախատեսված էր միևնույն համայնքի անդամների համար: Նրանով դրսևորվում էին հասարակական գիտակցության մեջ տեղ գտած պատկերացումների որոշ կողմերը «անդրաշխարհի» մասին: Նույնիսկ վաղ երկրագործական մշակույթներում, երբ թաղման սույն տեսակը բավականաչափ տարածված էր, այն միշտ գոյակցել է թաղման մյուս տեսակների, հիմնականում՝ միայնակ թաղումների հետ⁵³: Հետաքրքիր է սկյութների սովորությունը, որի համաձայն բացառիկ մտերիմ ընկերների աճյուններն ամփոփվում էին միևնույն դամբանաբլրի տակ⁵⁴: Հավանաբար, ճիշտ կլինի պնդել, որ ուշ բրոնզի դարաշրջանում առաջնորդները, քրմերը և ընտանեկան ստրուկները, սովորաբար, համայնական դամբաններում չեն թաղվել:

Ընտանեկան դամբարաններում օտարներին թաղել չէր կարելի⁵⁵: Ընտանիքի միասնությունը պահպանելը մարդկանց կարևորագույն խնդիրներից էր⁵⁶: Հավանորեն, այն պետք էր պահպանել նաև «այնկողմնային աշխարհում»: Այդ

⁵¹ Աստվածաշունչ. Ծննդոց, Բ:

⁵² С. К. Д и к ш и т. Введение в археологию. М., 1960, с. 127.

⁵³ В. А. А л е к ш и н. Социальная структура и погребальный обряд древнеземледельческих обществ. Л., 1986, с. 158.

⁵⁴ Л у к а н. Собрание сочинений в двух томах. Т. I. М.–Л., 1935, с. 313 (“Токсарид”, 43); Ж. Д ю м е з и л ь. Осетинский эпос и мифология. М., 1976, с. 48.

⁵⁵ В. А. А л е к ш и н. Նշվ. աշխ., էջ 159:

⁵⁶ Л. В у л л и. Забытое царство. М., 1986, с. 165.

չէ՞ր պատճառը, որ երբ ընտանեկան դամբարանները լիքը լցվում էին, նրանց վերևում կառուցվում էին նոր դամբանասարահներ (Կրետե, II հազարամյակի I կես)⁵⁷: Նախնիների՝ մասնավորապես ընտանիքի մեռած անդամների պաշտամունքը խիստ տարածված էր հին հասարակություններում: Հների մտածողությամբ, հանգուցյալները, որպես աստվածներին մոտիկ գտնվող խորհրդավոր էակներ, անմիջականորեն կարող էին նպաստել ընտանիքի բարգավաճմանը կամ հակառակը՝ վնաս հասցնել մարդկանց, բերքին, անասուններին⁵⁸: Ժառանգները պարտավոր էին պահպանել ընտանեկան նախնիների պաշտամունքը, ժամանակին կատարել աստվածներին և նախնիների հոգիներին ձոնված զոհաբերությունները, քանզի դրանից էր կախված նախնիների «բարեկեցությունն այնկողմնային աշխարհում», ուստի և իրենց բարգավաճումը երկրի վրա⁵⁹: Հավանաբար, ընտանեկան դամբարանները կառուցվում էին այս մտածողությունից ելնելով և պաշտամունքային արարողությունների ծիսական ազդեցությունն ավելի նպատակասլաց դարձնելու միտումով:

Դամբարանում հանգուցյալին այս կամ այն դիրքով տեղադրելը, ամենայն հավանականությամբ, որոշակի պատկերացումների արտացոլումն է⁶⁰: Հայաստանի պղնձեքարեդարյան և բրոնզեդարյան դիաթաղումներում մահացածները մեծ մասամբ ամփոփված են քնած մարդու դիրքով: Հնարավոր է, որ թաղման այս ձևը, որի ակունքները հին քարեդարում են, կապված լինի մահը որպես «քուն» ընկալելու հետ: «Քնածն ու հանգուցյալը նման են իրար, // Արդյոք քունը մահվան պատկերը չէ՞»⁶¹, – ասում է Ուտոնափիշտին Գիլգամեշին: Հայ ժողովրդական վեպում Դավիթը սպառնում է Մելիքի հասցեին.

Թե մահ չունի՝ մահ եմ բերե.
Թե գրող չունի՝ գրող եմ դառե.
Էնոր ջո՛ջ քուն կը քնացնեմ⁶²:

Հայ բանահյուսությունում հայտնի է նաև «Մինձ քունը քնանոս» անեծքը⁶³: Անեծքներում երբեմն մահը հիշատակվում է նաև որպես «սև քուն»⁶⁴, իսկ հայ ժողովրդական հանելուկներում՝ որպես «խաղաղ քուն» կամ պարզապես

⁵⁷ Г. Ч а й л д. У , стоков европейской ц, в, л, зац, , . М., 195г, с. 51.

⁵⁸ В. В. Б а р д а в е л и д з е. Древнейшие религиозные верования и обрядовое графическое искусство грузинских племен. Тбилиси, 1957, с. 162.

⁵⁹ История древнего мира, кн. I, с. 106.

⁶⁰ Л. В у л л и. Ур халдеев. М., 1961, с. 54.

⁶¹ Эпос о Гильгамеше (“О все видавшем”). М.–Л., 1961, с.71.

⁶² Մասունցի Դավիթ. Հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1961, էջ 237:

⁶³ Մ. Հ ա թ ը յ ը յ ը յ յ ա ն. նշվ. աշխ., էջ 200:

⁶⁴ Մ. Հ ա թ ը յ ը յ ը յ յ ա ն. Մահվան պատկերացումները հայկական անեծքներում.– Հանրապետական գիտական նստաշրջան, նվիրված 1982-1983 թթ. ազգագրական և բանահյուսական դաշտային հետազոտությունների հանրագումարին, գեկուցումների թեզիսներ, Երևան, 1984, էջ 22:

«քուն»⁶⁵: Մի շարք դեպքերում ննջեցյալը դամբարանում ամփոփված է խիստ կծկված դիրքով, որը գիտական գրականության մեջ սովորաբար անվանվում է Լմբրիոնալ, քանի որ հիշեցնում է պտղի ներարգանդային դիրքը⁶⁶: Հավանաբար, գերեզմանը համադրվել է արգանդի հետ, և մարդն «այն աշխարհը» պիտի գնար նույն դիրքով, ինչ դիրքով եղել է մինչև աշխարհ գալը⁶⁷: Դժվար չէ ենթադրել, որ Լմբրիոնալ դիրքով թաղումները կապված են մեռյալների վերածննդի պատկերացումների հետ⁶⁸:

Բերանքսիվայր դիրքով թաղումները (իմա՝ ննջեցյալի մարմինը շրջելու սովորությունը), հավանաբար, անցման, մի վիճակից մյուսին փոխակերպման ծիսակատարության արտահայտություններից է⁶⁹: Հնարավոր է, որ հիշյալ դիրքով են թաղվել այն հանգուցյալները, ովքեր համարվել են առնչված չար ոգիներին: Մշակույթի ավանդույթներում, օրինակ, թաղման նման դիրք է նախատեսված կախարդների (վիուկների) համար⁷⁰: Ռոմինացիների սովորություններով, բերանքսիվայր են թաղվել այն ննջեցյալները, որոնք համարվել են կրակի տարերքի հետ կապված դարձորյակներ⁷¹:

Թվում է, թե հնում կարևորել են նաև մահացածի դեմքի ուղղվածությունը⁷²: Եթե կմախքի ուղղվածությունը կարող էր կապված լինել մահվան պատկերացումներում հանդերձյալ աշխարհի կողմնորոշվածության հետ⁷³, ապա դեմքը, հնարավոր է, պիտի ուղղված լիներ որևէ սրբազան վայրի (լեռ, անտառ, ապուր և այլն)⁷⁴:

Դիակի գլխի տակ քարե «բարձ» դնելու սովորությունը ևս կարող է կապված լինել մահը որպես «քուն» ընկալելու հետ: Որպես «բարձ» տարբեր տեսակի քարերի կիրառությունը կարող է պայմանավորված լինել դրանց վերագրվող «չարխափան», «մաքրագործող» և այլ հատկություններով: Այս սովորության արձագանքն է, հավանաբար, «Գլուխդ չոր քարին դնես» անեծքը:

Հանգուցյալի աճյունը տապաստի վրա տեղադրելու սովորությունը, ըստ երևույթին, նույնպես պայմանավորված է «մահ» և «քուն» հասկացությունների

⁶⁵ Գ. Մ ր վ ա ն ձ տ յ ա ն ց. Մաննա, Կ. Պոլիս, 1876, էջ 317, Մ. Բ. Հ ա ր ո թ յ ո ն յ ա ն. Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965, էջ 108:

⁶⁶ Д ж. Т о м с о н. Исследования по истории древнегреческого общества. Доисторический эгейский мир. М., 1958, с. 42; Г. М. А с л а н о в, Р. М. В а и д о в, Г. И. И о н е. Նշվ. աշխ., էջ 48, К. Н. П и ц х е л а у р и. Восточная Грузия в конце бронзового века. Тбилиси, 1979, с. 26.

⁶⁷ Л. В у л л и. Նշվ. աշխ., էջ 42:

⁶⁸ Д ж. Т о м с о н. Նշվ. աշխ., էջ 42:

⁶⁹ Н. И. Т о л с т о й. Перевоорачивание предметов в славянском погребальном обряде.— В кн.: Исследования в области балто-славянской духовной культуры, с. 126. Բնականաբար, նույն ծիսակատարության համակարգում կարելի է դիտարկել նաև գույքը, մասնավորապես՝ անոթները, շրջելու արարողությունը:

⁷⁰ Նույն տեղում, էջ 120:

⁷¹ Т. Н. С в е ш н и к о в а. Волк в контексте румынского погребального обряда.— В кн.: Исследования в области балто-славянской духовной культуры, с. 133.

⁷² Ю. А. Ш и л о в. Космические тайны курганов. М., 1990, с. 382.

⁷³ С. К. Д и к ш и т. Նշվ. աշխ., էջ 181:

⁷⁴ Б. Б. П и о т р о в с к и й. Археология Закавказья. Л., 1949, с. 89.

համադրության հետ: «Փայթաթվավ խսիր, // Գնաց հեսիր (գերություն)»⁷⁵, – ասվում է մահացածի վերաբերյալ հայ ժողովրդական հանելուկներից մեկում: Հիշենք նաև, որ տապաստը գործելու համար օգտագործված շիվերը կամ եղեգնը, որպես մեռնող-հառնող աստծո խորհրդանիշ, անկասկած, վերածննդի գաղափարի կրողներն են⁷⁶:

Մահվան վերոհիշյալ ըմբռնման հետ է կապված նաև ննջեցյալի աճյունի ամփոփումը դիամահճին: Այս կերպ թաղումը, անշուշտ, առավել պատվավոր էր նկարագրված նախորդ ձևերից, ուստի և ավելի հաճելի աստվածներին: Երբեմն դիամահճի ոտքերը նմանեցվում էին կենդանիների ոտքերին («այնկողմնային աշխարհին» առնչվածության ևս մեկ դրսևորում): Դիամահիճը, սովորաբար, պատրաստվում էր սրբազան համարվող ծառի (ուռենի, կարմրածառ և այլն) բնափայտից, որն ընկալվում էր որպես կենաց կամ մահվան-վերածննդի ծառ⁷⁷: Հետևաբար, տվյալ բնափայտի օգտագործումը թաղման ծիսակարգում նախ պետք է բացատրել մահվան մասին պատկերացումներով և հետո միայն՝ փայտամշակման նկատառումներով:

Հայկական հեթանոսական գաղափարաբանության մեջ արևի աստվածության կերպարը սերտորեն առնչվում է սայլին կամ անվին: Հնագիտական մի շարք առարկաների վրա պատկերված տեսարաններում արևն իր պտույտը երկնականարում կատարում է ձիեր լծված կառքով, որին ուղեկցում են թռչուններ⁷⁸: Ժողովրդական պատկերացումներում սայլի անիվը նմանեցվում էր արեգակին⁷⁹: Ուսումնասիրողները բազմիցս անդրադարձել են սայլի կամ կառքի ծիսական նշանակությանը, գտնելով, որ ավանդություններում դրանց կամ անվի հանդես գալը որպես արևի խորհրդանիշ՝ համընդհանուր երևույթ է⁸⁰: Մակայն սայլը կամ կառքը խորհրդանշական են ոչ միայն արևի, այլև մի շարք ուրիշ աստվածությունների համար: Կառքով են ընթանում հին հնդկական աստվածություններ Ինդրան, Մարութները, Աշվինները⁸¹: Հին հունական առասպելներում երկանիվ կառքը ոչ միայն Հելիոսի, այլ նաև Պոսեյդոնի խորհրդանիշն է: Ամեն դեպքում, ինչպես արևի, այնպես էլ մյուս աստվածությունները հանդես են գալիս որպես առողջացնող, հրաշագործ փրկիչներ, նրանք կապված են կյանքի և պտղաբերության գաղափարների հետ: Հնարավոր է, որ դրվելով սայլի վրա, մահացածը նմանեցվում էր փրկիչ աստվածներին, ինչպես նաև հենց այդ սայլով երկնային ոլորտ «ուղարկվում»: Թվում է,

⁷⁵ Մ. Բ. Հ ա թ ո թ յ ո լ յ ա ն. Հայ ժողովրդական հանելուկներ, էջ 107:

⁷⁶ Ա. Մ ա տ ի կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 236-238:

⁷⁷ В. Н. Т о п о р о в. Древо жизни.– Мифы народов мира, т. 1. М., 1980, с. 396; Эпос о Гильгамеше, с. 112; Э. Ц е р е н. Лунный бог, с. 129.

⁷⁸ Հ. Ռ. Բ ո թ յ ա յ ե լ յ ա ն. Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում (ըստ հնագիտական նյութերի), Երևան, 1973, էջ 50-54:

⁷⁹ Գ. Մ թ Վ ա ն ձ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 126, J. D é c h e l e t t e. Manuel d'archéologie préhistorique celtique et gallo-romaine. II. Paris, 1928, 414-415.

⁸⁰ В. Г. А р д з и н б а. Ритуалы и мифы древней Анатолии. М., 1982, с. 24; Т. В. Г а м к р е л и д з е, В я ч. В с. И в а н о в. Նշվ. աշխ., էջ 720:

⁸¹ Ригведа. Мандалы I-IV, с. 644, 760.

այս պատկերացումն է արտացոլված Ռիգվեդայում⁸²: Մտացվում է, որ սայլով թաղվողների համար հանդերձյալ աշխարհը գտնվում էր երկնքում: Ըստ «Ավագ Էդդայի»՝ Բրյունհիլդի դին խարույկ է բարձրացվել այնպես, ինչպես որ, հավանաբար, բերվել է խարույկի մոտ՝ թանկարժեք գործվածքներով զարդարված սայլի վրա: Ժողովրդական հին հավատալիքների համաձայն հենց այդ սայլով էլ Բրյունհիլդը «գնացել է այնկողմնային աշխարհ»⁸³: Գ. Չայլդի կարծիքով, դիասայլերը դամբարան են իջեցվել նույն նպատակով, ինչ որ մակույկները⁸⁴:

Ննջեցյալի աճյունի վրա օխրա սփռելու սովորությունը նս, անշուշտ, կապված է մահվան պատկերացումների հետ: Ուսումնասիրողները միակարծիք չեն այս երևույթը մեկնաբանելիս: Այսպես, ըստ Հ. Մնացականյանի, աճյունին ցանված կարմիր օխրան արտահայտում է լույսի և արևի գաղափարը⁸⁵, իսկ Վ. Մոզիլինիկովի կարծիքով՝ կարմիր ներկը կրակի խորհրդանշան է⁸⁶: Վ. Մարկովինը հակված է այն տեսակետին, որ օխրա սփռելով մաքրագործում էին ննջեցյալին, նրա մարմինը տոգորելով խորհրդանշական արյամբ⁸⁷: Գ. Չայլդը ենթադրում է, որ ճիշտ չի լինի դիակի վրա օխրա ցանելու սովորությունը բացատրել որպես մահացածի վերակենդանացման փորձ՝ գունատված մարմնին կենդանության գույնը վերադարձնելու միջոցով⁸⁸: Ա. Մոնգայթի տեսակետով՝ ներկը կոչված էր պաշտպանելու ողջերին՝ մեռածներից⁸⁹: Ա. Բուտրիմասը և Ա. Գիրինինկասը գտնում են, որ օջախներում հայտնաբերված կարմիր օխրան խորհրդանշել է կրակը, իսկ աճյունի վրա ցանվածը՝ արյան վերածնող դերը: Վերջիններս օխրան դիտարկում են նաև որպես աճյունի պահպանման միջոց⁹⁰: Դեռևս խոր հնադարում կարմիր գույնը համարվում էր կյանքի խորհրդանիշ⁹¹: Կարմիրը, ըստ ազգագրական որոշ տվյալների, կյանքի գույնն է⁹² և համադրվում է արյան գույնին⁹³: Այն կապված է արևի հետ և ծիսականորեն համարժեք է դեղին գույնին⁹⁴: Կարծում ենք, ուշբրոնզեդարյան Հայաստանում հանգուցյալի աճյունն օխրայով «օձելու» սովորությունը կապված էր մաքրագործման և վերածննդի գաղափարների հետ:

⁸² Ригведа. Избранные гимны, X, 135, 3–4.

⁸³ Старшая Эдда, с. 124–125.

⁸⁴ Г. Ч а й л д. Древнейший Восток в свете новых раскопок. М., 1956, с. 236.

⁸⁵ Հ. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն ի. Հնագույն դամբարանադաշտ Յամաքաբերդ գյուղի մոտ.– ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1954, № 5, էջ 91:

⁸⁶ В. А. М о г и л ь н и к о в. Погребальный обряд культур III в. до н. э.–III в. н. э.– В кн.: Погребальный обряд племен Северной и Средней Европы в I тыс. до н. э.–I тыс. н. э., с. 159.

⁸⁷ В. И. М а р к о в и н. Նշվ. աշխ., էջ 231:

⁸⁸ Г. Ч а й л д. Прогресс и археология. М., 1949, с. 141.

⁸⁹ А. Л. Монгайт. Նշվ. աշխ., էջ 170:

⁹⁰ А. Б у т р и м а с, А. Г и р и н и н к а с. Старые местные и новые погребальные обряды в неолите Литвы.– В кн.: Исследования в области балто-славянской духовной культуры, с. 153.

⁹¹ Э. Ц е р е н. Библейские холмы, с. 185.

⁹² Ю. Л и п с. Происхождение вещей. М., 1954, с. 267–269.

⁹³ В. Т э р н е р. Символ и ритуал. М., 1983, с. 44, 82–83.

⁹⁴ Նույն տեղում, էջ 72:

Թաղման ծեսի տևողությունը, ի հարկե, մինևույնը չէ տարբեր դարաշրջաններում, այլազան էթնիկական խմբերի համար: Այն, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է հոգու, մարմնի և մահվան մասին եղած հայացքներով: «Ավեստայի» հնագույն պատկերացումների համաձայն, ննջեցյալի մարմինը լքած հոգին, մինչև մեռյալների թագավորություն անցնելը, երեք օր մնում էր երկրի վրա: Այդ պատճառով, առաջին երեք օրերի արարողությունները կենսականորեն կարևոր էին համարվում⁹⁵: Եթե Հեկտորի հուղարկավորման նկարագրությամբ դատենք հոմերոսյան Տրոյայում թաղման ծեսի տևողության մասին, ապա այն տևել է առնվազն 11 օր, իսկ «ողբը»՝ 9 օր⁹⁶: Խեթական արքայական թաղման ծեսը տևել է «առնվազն 13 օր կամ գուցե ավելի»⁹⁷, մեկ այլ հայեցակետով՝ 14 օր⁹⁸, ըստ որում, 12 օրերի ընթացքում զոհաբերություններ են կատարվել մահացածի «կերպարի» առջև: Մի համարձակ տեսակետի համաձայն, զոհաբերությունների օրերի թվի և մարդու մարմնի մասերի քանակի վերաբերյալ հին պատկերացումների միջև որոշակի կապ է եղել⁹⁹: Մեզ այդ միտքը հետաքրքիր է թվում այն պատճառով, որ խեթական թաղման ծիսակատարություններից մեկում հիշատակված են «Աչքերի», «Ճակատի», «Ականջների» աստվածությունները¹⁰⁰: Եթե հիշյալ տեսակետը ճիշտ է, ապա տրամաբանական կլինեք եզրակացնել, որ ծեսի յուրաքանչյուր օրը, սահմանված հաջորդականությամբ, զոհաբերություններ էին ձեռնվում այն տարերքին, որին «ձուլվելու» էր մարմնի տվյալ մասը: Այս կերպ ննջեցյալը հաղորդակից էր դարձվում «աշխարհի արարչագործությանը», որի միջոցով «երաշխավորվում» էր նրա վերածնունդը:

ОБУСЛОВЛЕННОСТЬ ПОГРЕБАЛЬНЫХ РИТУАЛОВ ПРЕДСТАВЛЕНИЯМИ О СМЕРТИ В ПОЗДНЕБРОНЗОВОЙ АРМЕНИИ

ГАРЕГИН ТУМАНЯН

Резюме

В ритуале погребения, одной из основных составляющих погребального обряда, отражается отношение сородичей к праху покойника. Важнейшие элементы погребального ритуала – способ захоронения, тип погребения, положение скелета, направленность трупа, место почивания праха и т. д. – связаны с древними представлениями о смерти и возрождении. Так, в эпоху поздней бронзы способ ингумации в Армении может быть связан с идеями об умирающем и воскресающем бо-

⁹⁵ Б. А. Литвинский, А. В. Седов. Культы и ритуалы кушанской Бактрии. Погребальный обряд, М., 1984, с. 157; М. Б о й с. Նշվ. աշխ., էջ 21:

⁹⁶ Բլիսկան, XXIV:

⁹⁷ О. Р. Г е р н и. Նշվ. աշխ., էջ 146:

⁹⁸ История древнего Востока, ч. 2, с. 156.

⁹⁹ Т. В. Г а м к р е л и д з е, В я ч. В с. И в а н о в. Նշվ. աշխ., էջ 826:

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 473:

жестве Ара, а в основе способа погребения расчленением, возможно, лежат представления о космосе, образовавшемся из частей тела мифического человека, принесенного в жертву. Способы перезахоронения и кремации возникли, наверно, на единой основе представлений о неразрывности связи между телом и душой: душа покидает тело только после разложения последнего. С помощью анализа и сопоставлений выводится суть концепции, лежащей в основе ритуалов погребений в позднебронзовой Армении—идея возрождения.

THE DEPENDENCE OF FUNERARY RITUALS FROM PERCEPTIONS OF DEATH IN THE LATE BRONZE AGE ARMENIA

GAREGIN TUMANYAN

S u m m a r y

The attitude of mourners to the deceased is reflected in the ritual of interment, one of the main constituents of funerary rites. The principal elements of funerary ritual – mortuary mode, funeral type, position of skeleton, direction of corpse, resting place of ashes, etc., and the ancient perceptions of death and revival are linked. For example, in this age, the method of inhumation in Armenia could be connected with the ideas about dying and reviving divinity Ara, while the mortuary in a way of corpse partition could possibly be based on images about the cosmos, which is made from the body parts of a sacrificed mythological man. The methods of reburial and cremation were probably originated from the same perception about the unbreakable link between body and soul: soul abandons the body only after the latter decays. Through analysis and comparisons, the essence of the conception underlying the funerary ritual in Late Bronze Age Armenia – the idea of revival, is derived.